

ՏԵՐԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՍՓՈՓԱԳԻՐ

«ՎՏԲ-Յարմարավետ» ֆիզիկական անձանց ժամկետային ավանդ

1. Ավանդի նկարագրություն, էական դրույթներ

- 1.1. Ավանդը ներդրվում է ռեզիդենտ կամ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձի կողմից:
- 1.2. Ավանդը անսահմանափակ անգամներ լրացուցիչ մուտքագրումներով և ելքագրումներով է:
- 1.3. Ավանդի դիմաց տոկոսները վճարվում են ժամկետի ավարտին:
- 1.4. 180 օր ժամկետից ավել ժամկետով ավանդների համար, եթե ավանդի ներդրման պահին հաճախորդը հայտարարում է, որ հնարավոր է պահանջի ավանդային պայմանագրի վաղաժամկետ դադարեցում (բայց ոչ շուտ, քան ներդրման օրվանից 90 օր անց), Բանկն ի սկզբանե կնքում է ավանդային պայմանագիր՝ տվյալ ավանդատեսակի համար գործող տոկոսադրույթից 1% ցածր տոկոսադրույթով, իսկ պայմանագրի վաղաժամկետ դադարեցման դեպքում տոկոսագումարի վճարումը կատարում է փաստացի օրերի համար, տվյալ ավանդատեսակի պայմաններով, նախատեսված, տվյալ պահին Բանկում գործող 90 օր ներդրված ավանդների համար սահմանված տարեկան տոկոսադրույթով:
- 1.5. Ավանդը ներդրվում են ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, Եվրո և ՌԴ ռուբլի արժույթներով:
- 1.6. Ավանդի ժամկետը սահմանվում է 91 օրից մինչև 365 օր:
- 1.7. Ավանդի ներդրման սկզբնական նվազագույն գումարը.
 - ՀՀ դրամով ավանդների համար՝ 200 000 դրամ, կամ 2 000 000 դրամ, կամ 20 000 000 դրամ,
 - ԱՄՆ դոլարով ավանդների համար՝ 500 դոլար, կամ 5 000 դոլար, կամ 50 000 դոլար,
 - Եվրոյով ավանդների համար՝ 300 Եվրո, կամ 50 000 Եվրո,
 - ՌԴ ռուբլով ավանդների համար՝ 20 000 ռուբլի, կամ 200 000 ռուբլի, կամ 2 000 000 ռուբլի:
- 1.8. Ավանդին լրացուցիչ վերջին մուծումը կարող է կատարվել մինչև ավանդի մարման ժամկետից՝ 30 օրացուցային օր առաջ:
- 1.9. Ավանդից լրացուցիչ ելքագրումները կարող են կատարվել ավանդի ներդրման հաջորդ օրվանից մինչև ավանդի մարման նախորդ օրը, ընդ որում՝
 - դրամական միջոցների կուտակման արդյունքում Ավանդի սահմանված չնվազող մնացորդի հաջորդ շեն անցնելու դեպքում անցման հաջորդ օրվանից ֆիքսվում է նոր (ավելի բարձր) չնվազող մնացորդի համար սահմանած տոկոսադրույթը,
 - ավանդի գործողության ողջ ընթացքում ավանդի չնվազող մնացորդը է հանդիսանում ավանդի գումարի կեսը, ընդ որում՝ դրամական միջոցների ելքագրումների արդյունքում Ավանդի համար սահմանված չնվազող մնացորդը չի նվազում:
- 1.10. Ավանդը բազմարժույթային է՝ Ավանդային պայմանագրի գործողության ընթացքում ավանդատուին հնարավորություն է ընձեռվում բազմակի անգամ իրականացնել ավանդի ամբողջ գումարի (ոչ մասնակի) արժույթի փոխարկում առանց ավանդային պայմանագրի լուծման՝
 - Բանկի փոխարժեքով՝ արժույթի գնման և վաճառքի հայտ-պայմանագրի հիման վրա,
 - պահպանելով հաշվեգրված (կուտակված) տոկոսները,
 - պայմանագրի կնքման պահին «ՎՏԲ-Յարմարավետ» ավանդի համար Բանկի կողմից սահմանված պայմաններով:
- 1.11. Ավանդի առավելագույն չափը սահմանվում է մինչև 50.0 մլն ՀՀ դրամ (համարժեք արտարժույթ)՝ 50.0 մլն ՀՀ դրամից (կամ համարժեք արտարժույթից) ավելի գումարի ավանդները ներգրավվում են պայմանագրային հիմունքներով:
- 1.12. Ավանդի համար սահմանված տոկոսային եկամուտը փոխանցվում է Բանկում Ավանդատուի անունով բացված քարտային կամ այլ հաշվի:
- 1.13. Ավանդի ձևակերպումը իրականացվում է Ավանդատուի՝ իր անձը հաստատող փաստաթղթերի ներկայացմամբ:
- 1.14. Ավանդը կարող է ներդրվել նաև Ավանդատուի լիազոր ներկայացուցչի կողմից, Բանկի հետ ավանդի ներգրավման պայմանագիր կնքելու և ավանդի գումարը մուծելու մասին նոտարի կողմից վավերացված լիազորագրի և լիազոր ներկայացուցչի անձը հաստատող փաստաթղթի ներկայացմամբ:
- 1.15. Ավանդը պայմանագրով պայմանագրված ժամկետում չպահանջվելու դեպքում, այն ավտոմատ երկարաձգվում է նույն պայմաններով, իսկ տարեկան տոկոսադրույթը սահմանվում է երկարաձգման պահին տվյալ ավանդի համար Բանկում գործող տոկոսադրույթը:
- 1.16. Տվյալ ժամկետային ավանդի ներգրավումը Բանկում դադարեցված լինելու դեպքում, ավանդային պայմանագիրը վերածնակերպվում է նույն արժույթով՝ բանկային (ցպահանջ) հաշվի համար տվյալ պահին բանկում սահմանված պայմաններով:
- 1.17. Պայմանագրի գործողության ընթացքում Բանկն իրավասու է միակողմանի փոփոխել պայմանագրում նախատեսված ավտոմատ երկարաձգման պայմանը, նախօրոք, այդ մասին, երկարաձգված ժամկետի ավարտից մեկ ամիս առաջ տեղյակ պահելով Ավանդատուին:

2. Տեղեկատվություն տոկոսադրույթների վերաբերյալ

- 2.1 «Տարեկան պարզ տոկոսադրույթ»՝ տարեկան կտրվածքով ավանդային պայմանագրով սահմանված տոկոսադրույթ, որի հիման վրա բանկը հաշվարկում է ավանդատուին վճարման ենթակա տոկոսագումարները:
- 2.2 Ավանդի պարզ տոկոսադրույթի չափ՝

Ավանդի ներդրման գումար (չնվազող մնացորդ)/ժամկետ	91 – 180 օր	181 – 270 օր	271 – 365 օր
ՀՀ դրամ			
200 000 -ից	9.50%	10.50%	11.00%
2 000 000 -ից	9.75%	10.75%	11.25%
20 000 000 -ից	10.00%	11.00%	11.50%
ԱՄՆ դոլար			
500 -ից	3.75%	5.75%	6.50%
5 000 -ից	4.00%	6.00%	7.00%
50 000 -ից	4.50%	6.00%	7.50%
Եվրո			
300 -ից	2.00%	3.50%	4.50%
50 000 -ից	2.50%	4.00%	5.00%
ՌԴ ռուբլի			
20 000 -ից	0.50%	1.00%	1.25%
200 000 -ից	0.75%	1.25%	1.50%
2 000 000 -ից	1.00%	1.50%	1.75%

2.3 Ավանդային պայմանագրով վճարվող տոկոսների հաշվարկման օրինակ՝

- (100 000 ՀՀ դրամ) * 11.50% = 11500 ՀՀ դրամ՝ 365 օրվա համար:

2.4 Ավանդի տարեկան տոկոսային եկամտաբերությունը (APY)՝

«APY-էյ-Փի-Ուայ (այսուհետ՝ APY)» տվյալ ավանդատեսակի համար հաշվարկված ավանդի տարեկան տոկոսային եկամտաբերությունը: APY ցույց է տալիս, թե որքան կկազմի ավանդի տարեկան եկամտաբերությունը հաճախորդի կողմից ավանդի հետ կապված պարտադիր վճարներ կատարելու և ստացված տոկոսագումարները մայր գումարին ավելացնելու (կապիտալացման) արդյունքում:

2.5 Ավանդի տարեկան տոկոսային եկամտաբերությունը (APY) կազմում է՝

Ավանդի ներդրման գումար (չնվազող մնացորդ)/ժամկետ	91 – 180 օր	181 – 270 օր	271 – 365 օր
ՀՀ դրամ			
200 000 -ից	9.73%	10.72%	11.11%
2 000 000 -ից	10.00%	10.98%	11.37%
20 000 000 -ից	10.26%	11.24%	11.62%
ԱՄՆ դոլար			
500 -ից	3.76%	5.80%	6.53%
5 000 -ից	4.02%	6.06%	7.04%
50 000 -ից	4.53%	6.06%	7.54%
Եվրո			
300 -ից	2.00%	3.51%	4.51%
50 000 -ից	2.50%	4.02%	5.01%
ՌԴ ռուբլի			
20 000 -ից	0.50%	1.00%	1.25%
200 000 -ից	0.74%	1.25%	1.50%
2 000 000 -ից	0.99%	1.50%	1.75%

2.6 APY – տարեկան տոկոսային եկամտաբերության տոկոսադրույթով վճարվող տոկոսների հաշվարկման օրինակ՝

- (100 000 ՀՀ դրամ) * 11.62% = 11 620 ՀՀ դրամ՝ 365 օրվա համար:

2.7 Բանկն ավանդատուին ավանդի դիմաց վճարում է տոկոսներ՝ պայմանագրով սահմանված չափով:

Ավանդի տոկոսները հաշվարկվում են ավանդի ներդրման հաջորդ օրվանից մինչև ավանդատուին ավանդի գումարը վերադարձնելու նախորդ օրը: Ավանդի համար սույն պայմանագրով սահմանված տոկոսադրույթը պայմանագրային ժամկետում մնում է անփոփոխ:

2.8 Պայմանագրով սահմանված տոկոսները ստանալու համար ավանդատուից պահանջվում է մինչև ավանդի ժամկետի ավարտը պահպանել ավանդային հաշվին մուտքագրված գումարը:

2.9 Ավանդը կարող է վերադարձվել ժամկետից շուտ: Ավանդատուի կողմից Ավանդի գումարը ժամկետից շուտ պահանջի դեպքում, գումարը վերադարձվում է վերջին փոխարկման արժույթով՝ կատարելով տոկոսների վերահաշվարկ տվյալ պահին Բանկում բանկային հաշվի (ցպահանջ ավանդի) համար սահմանված տարեկան տոկոսադրույթով:

3. Տեղեկատվություն սակագների և տուժանքների մասին

3.1 Հաշվի քաղվածք

Առձեռն տրամադրում բանկի տարածքում	
Հաշվի քաղվածք	
ամսեկան	Անվճար
այլ պարբերականությամբ	500*
Վճարման հանձնարարականի SWIFT հաղորդագրության պատճեն	
1.000 *	
Քաղվածքի, կատարված գործարքի փաստաթղթի պատճեն՝ ներառյալ ավանդային, վարկային հաշիվների, ընդունված արժեթղթերի, ավանդատուների կամ նրանց ժառանգների գրավոր հարցումով	
մինչև 1 տարի վաղեմության	1.000 *
1 տարուց ավելի վաղեմության	2.000 *
Քաղվածքի, կատարված գործարքի հաստատում	
մինչև 2 տարի վաղեմության	Անվճար
2 տարուց ավելի վաղեմության	2.000 *
Այլ տեղեկանքներ	1.500 *
Առաքում՝ կիրառվում է ի հավելումն տրամադրման վճարների	
ՀՀ տարածքում	1,000*
ՀՀ տարածքից դուրս	Համաձայն փոստային օպերատորի սակագների

3.2 Ավանդային հաշվի բացման, վարման և փակման ընթացքում տուժանքներ չեն կիրառվում:

3.3 Ավանդային հաշվի նվազագույն մնացորդ չպահպանելու դեպքում տուժանքներ չեն գանձվում:

3.4 Ավանդի գործողության ընթացքում Բանկը Ավանդատուին տրամադրում է VISA Int. վճարային համակարգի պլաստիկ քարտ հետևյալ սակագնային պայմաններով՝

- բանկային քարտի թողարկում՝ 0 ՀՀ դրամ,
- քարտի սպասարկման տարեկան վճար քարտի գործողության առաջին տարում՝ 0 ՀՀ դրամ,
- քարտային հաշվի չնվազող մնացորդ՝ 0 ՀՀ դրամ,
- քարտի սպասարկման բոլոր այլ սակագները՝ համաձայն Բանկում գործող սակագների:

3.5 Քարտի տեսակը որոշվում է Ավանդի գումարից կախված՝

- VISA Electron՝ մինչև 1 մլն ՀՀ դրամ (համարժեք արտարժույթով) ավանդի դեպքում,
- VISA Classic՝ 1 մլն -6.999 մլն ՀՀ դրամ ներառյալ (համարժեք արտարժույթով) ավանդի դեպքում,
- VISA Gold՝ 7.0 մլն ՀՀ դրամից (համարժեք արտարժույթ) և ավելի բարձր ավանդի դեպքում:

4. Վեճերի լուծման կարգը

Պայմանագրի գործողության ընթացքում կողմերի միջև ծագած վեճերը և տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով: Բանակցությունների միջոցով համաձայնության չգալու դեպքում վեճը լուծվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ավանդատուն հնարավորություն ունի Բանկի և իր միջև սույն պայմանագրից բխող բոլոր պահանջները ներկայացնել Ֆինանսական համակարգի հաշտարարին:

Ավանդը երաշխավորված է Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից՝
 համաձայն «Ֆիզիկական անձանց ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի:



Ավանդների երաշխավորվող սահմանաչափերը հետևյալն են՝

Ավանդի արժույթային կառուցվածքը	Եթե նույն բանկում ունեք միայն դրամային ավանդ	Եթե նույն բանկում ունեք միայն արտարժույթային ավանդ	Եթե նույն բանկում ունեք և ՀՀ դրամով, և արտարժույթով ավանդ Եթե դրամային ավանդը 2 միլիոն դրամից պակաս է	Եթե դրամային ավանդը 2 միլիոն դրամից ավել է
Ավանդի երաշխավորման առավելագույն չափը	4 միլիոն ՀՀ դրամ	2 միլիոն ՀՀ դրամ	2 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է դրամային ավանդն ամբողջությամբ և արտարժույթային ավանդը՝ երկու միլիոն դրամի և հատուցման ենթակա դրամային ավանդի տարբերության չափով)	4 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է միայն դրամային ավանդը)
* Նույն բանկում բոլոր դրամային ավանդները համարվում են մեկ ավանդ, բոլոր արտարժույթային ավանդները համարվում են մեկ ավանդ: Համատեղ ավանդը համարվում է առանձին ավանդ՝ պայմանագրով սահմանված մասնաբաժնի չափով:				

5. «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ հաճախորդին հաշվեգրված տոկոսները վճարելիս Բանկը հանդես է գալիս որպես ավանդատուի հարկային գործակալ, գանձում է եկամտահարկ տոկոսագումարի (եկամտի) 10%-ի չափով և փոխանցում պետական բյուջե: